«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 02/12/2024

դեկտեմբեր 2024թ.

Ամսաթիվ՝ 02 դեկտեմբեր 2024թ.
Ժամ՝ 14:00
Հասցե՝ ՀՀ, 2501, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Երևանյան 2
Փաստաթղթի համար՝ 02/12/2024

Ասկե Գրուպ» ԲԲ ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) խորհրդի նիստին ներկա էին՝

1. Միխաիլ Հարությունյան՝ խորհրդի նախագահ:
2. Խաչատուր Անտոնյան՝ խորհրդի անդամ:
3. Վազգեն Նիկոլյան՝ խորհրդի անդամ:
4. Դավիթ Յավրույան՝ խորհրդի անդամ:
5. Նազիկ Ավագյան՝ խորհրդի քարտուղար:

Համաձայն Ընկերության կանոնադրության և ՀՀ կիրառելի օրենսդրության՝ Ընկերության խորհրդի նիստի քվորումն ապահովված է և խորհրդի նիստն իրավասու է:

Խորհրդի նախագահը բացեց նիստը և ներկայացրեց նիստի օրակարգը.

Օրակարգ՝

«Ասկե Գրուպ» ԲԲ ընկերության դրամային (ISIN AMASGRB23KT8) և դոլարային (ISIN AMASGRB24KT6) պարտատոմսերը «Հայաստանի ֆոնդային Բորսա» ԲԲԸ-ում ցուցակման դիմելու հաստատում:

Խորհրդի նախագահը ներկայացրեց օրակարգի հարցը՝ պարզաբանելով, որ Ընկերության խորհրդի՝ 08.11.2024 թվականի թիվ 08/11/2024 որոշմամբ հաստատվել է Ընկերության դրամային (ISIN AMASGRB23KT8) և դոլարային (ISIN AMASGRB24KT6) պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման վերջնական պայմանները (այսուհետ՝ Թողարկման վերջնական պայմաններ): Ընդ որում՝ սույն թվականի նոյեմբերի 18-29-ի ընթացքում ամբողջությամբ տեղաբաշխվել են թե՛ դրամային (ISIN AMASGRB23KT8), թե՛ դոլարային (ISIN AMASGRB24KT6) պարտատոմսերը:
Նշվածով պայմանավորված՝ անհրաժեշտ է Ընկերության խորհրդի որոշմամբ հաստատել Թողարկման վերջնական պայմանների հիման վրա Ընկերության դրամային (ISIN և դոլարային (ISIN AMASGRB24KT6) պարտատոմսերը ցուցակման դիմելու հայտը Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերությունում:

Խորհրդի նախագահն առաջարկեց քվեարկության դնել օրակարգի հարցերը:

Ղեկավարվելով Ընկերության կանոնադրությամբ և ՀՀ կիրառելի օրենսդրությամբ՝ Ընկերության խորհուրդը միաձայն.

ՈՐՈՇԵՑ

Հաստատել՝ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ Ընկերության կողմից դրամային (ISIN և դոլարային (ISIN AMASGRB24KT6) պարտատոմսերի ցուցակման դիմելու հայտերը:

Արձանագրությունը կազմված է ք. Չարենցավան, Երևանյան 2, 02 դեկտեմբեր 2024թ.

Խորհրդի նախագահ՝
Միխաիլ Հարությունյան

Ամսաթիվ՝ [02/12/24]

Խորհրդի անդամ՝ Խաչատուր Անտոնյան

Ամսաթիվ՝ [02/12/24]

Խորհրդի անդամ՝ Վազգեն Նիկոլյան

Ամսաթիվ՝ [02/12/24]

Խորհրդի անդամ՝ Դավիթ Յավրույան

Ամսաթիվ՝ [02/12/24]

Ֆինանսական տնօրեն՝ Կարինե Մամիկոնյան

Ամսաթիվ՝ [02/12/24]

Ստորագրությունները հավաստում եմ՝

Տնօրեն՝ Հրաչյա Մուրադյան

Ամսաթիվ՝ [02/12/24]